Արձանագրություն N 2

Երևան քաղաքի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի շրջակա տարածքի ոռոգման ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/117» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

28.08.2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մատասյան/գնահատող/, Բ. Տեր-Թովմասյան /գնահատող/, Լ. Գևորգյան /բացող/, Ս. Գևորգյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ « ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/117» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Մարտիրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/117» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Մարտիրոսյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Երևաննախագիծ» ՓԲԸ
2	«ՋԻՆՋ» ՍՊԸ
3	«ՀԳՇՆ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Մարտիրոսյան)

3.1 Գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի շրջակա տարածքի ոռոգման ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
«Երևաննախագիծ» ՓԲԸ	950000	700,000	140,000	840,000
«ՋԻՆՋ» ՍՊԸ		2,200,000	440,000	2,640,000
«ՀԳՇՆ» ՍՊԸ		4,583,333	916,667	5,500,000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Մարտիրոսյան)

4.1 Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ՋԻՆՋ» ՍՊԸ-ի:

- «ՋԻՆՋ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես, փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հաշվի առնելով, որ համաձայն ներկայացված թիվ 1 հավելվածի մասնակիցը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՋԻՆՋ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետև՝ Կարգ/ 41-րդ կետի:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Երևաննախագիծ» ՓԲԸ	Բավարար
«ՋԻՆՋ» ՍՊԸ	Անբավարար
«ՀԳՇՆ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ա. Մարտիրոսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/117» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

6. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ա. Մարտիրոսյան)

6.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

6.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Մարտիրոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Մարտիրոսյան

Անդամներ՝ ---------- Ե. Մատասյան

---------- Ս. Գևորգյան

---------- Լ. Գևորգյան

---------- Բ. Տեր-Թովմասյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան